ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/3

ք. Երևան «12» հունվարի 2023թ.

ՀՀ ֆինանսների նախարարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Կ. Սարգսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Ստեպ Լոջիկ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Դավթյանի (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, (այսուհետև՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեխնիկական օժանդակության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 234000000 (երկու հարյուր երեսունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված կնքվելիք համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր

է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15:Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է

երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ստեպ Լոջիկ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, 0015, Արգիշտի 7
ՀՎՀՀ՝ 02629081	«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011018539	Հ/Հ՝ 1510017270080077
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 02840667
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Կ. Սարգսյան	_____ Դ. Դավթյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 12 » հունվարի 2023 թ. կնքված
ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71351550/504	SS ենթակառուցվածքի տեխնիկական աջակցության ծառայությունների մատուցում*	դրամ	234000000	1	ք.Երևան Մելիք-Ադամյան 1 , ք.Դիլիջան Մաքսիմ Գորկու 29	Մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ տեխնիկական օժանդակությունը պետք է տրամադրվի 20/02/2023-ից մինչև 20/02/2026 ներառյալ

*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տեխնիկական աջակցությունը պետք է տրամադրվի «Սարքավորումների ցանկ» Հավելված 1–ով սահմանված ապարատա-ծրագրային բաղադրիչների վրա ըստ սարքավորումների տեղակայման հասցեների:

Տեխնիկական աջակցությունը պետք է ներառի սարքավորումների սերվիսային սպասարկում և Կատարողի կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության ծառայություններ: Սպասարկման ծառայության տեսակը նշված է Հավելված 1-ում՝ ապարատա-ծրագրային բաղադրիչների յուրաքանչյուր միավորի համար:

Ապարատա-ծրագրային բաղադրիչների սերվիսային սպասարկման ապահովման նպատակով տրամադրվող «Արտադրող» (Vendor) տիպի ծառայությունները պետք է ձեռք բերվեն և իրականացվեն Կատարողի կողմից՝ արտադրող ընկերությունների տեխնիկական աջակցման ծառայությունների ներգրավմամբ:

Ապարատա-ծրագրային բաղադրիչների սերվիսային սպասարկման ապահովման՝ «Սպասարկող» (Integrator) տիպի ծառայություններն պետք է իրականացվեն Կատարողի կողմից՝ սեփական միջոցների և ինժեներական անձնակազմի միջոցով:

Տեխնիկական աջակցության շրջանակներում Կատարողը պետք է ապահովի.

1. Պատվիրատուի դիմումների ընդունում և գրանցում (այսուհետ՝ Դիմում)՝ սույն տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխան.

2. Պատվիրատուի ծառայությունների մատուցում պահանջող ապարատա-ծրագրային բաղադրիչների անսարքությունների առաջնային ախտորոշում:

3. Պատվիրատուի անունից դիմումների գրանցում և հսկողության իրականացում արտադրող ընկերությունների տեխնիկական աջակցության ծառայություններում:

4. Վթարային վերականգնողական աշխատանքների իրականացում՝ ուղղված Պատվիրատուի ապարատա-ծրագրային բաղադրիչների անսարքությունների վերացմանը:

5. Պլանային-կանխարգելիչ աշխատանքների իրականացում՝ ուղղված ապարատա-ծրագրային բաղադրիչների հուսալիության բարձրացմանը և արտադրողականության օպտիմալացմանը, ներառյալ՝ սարքավորումների ծրագրային ապահովման թարմացումը և կարգաբերումը:

6. Ապարատա-ծրագրային բաղադրիչների ամենօրյա շահագործման վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ՝ դրանց խափանումները կանխելու, ինչպես նաև արտադրողականությունն օպտիմալացնելու համար:

7. Խորհրդատվական ծառայություններ՝ կապված Սարքավորման և դրա վրա տեղադրված օպերացիոն համակարգերի աշխատանքի ընդհատումների կամ արտադրողականության վատթարացման հետ:

8. Պատվիրատուի ապարատա-ծրագրային բաղադրիչների համար արտադրողի տեխնիկական աջակցության ծառայության ժամկետի երկարաձգում պայմանգրի գործողության շրջանակներում՝ տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխան պայմաններով, որի համար նշված է աջակցության «Արտադրող» (Vendor) տեսակը:

9. Ապարատա-ծրագրային բաղադրիչների սպասարկման աջակցության ծառայությունների մատուցում, որի համար նշված է աջակցության «Սպասարկող» (Integrator) տեսակը՝ կատարողի սեփական ռեսուրսների կիրառմամբ:

Տեխնիկական աջակցության իրականացման շրջանակներում կատարողը պարտավոր է կատարել.

1. Ապահովում է Պատվիրատուի դիմումների ընդունում, մշակում և կանխարգելիչ ու վերականգնողական աշխատանքների իրականացում շուրջօրյա (24x7x365) ռեժիմով:

2. Կատարողը պետք է տրամադրի անձնական սպասարկող մենեջեր՝ Պատվիրատուի հետ արագ փոխգործակցություն ապահովելու և սպասարկման խնդիրները լուծելու համար:

3. Սպասարկվող սարքավորումների տեղակայման վայր պահեստամասերի առաքումը և վերադարձը կատարվում է Կատարողի միջոցներով:

4. Կատարողը Պատվիրատուին տրամադրում է շուրջօրյա հեռախոսահամար, էլ.փոստի հասցե ինձպես նաև մուտք դեպի դիմումների մշակման էլեկտրոնային հարթակ (ServiceDesk համակարգ)՝ դիմումների գրանցման և կարգավիճակին հետևելու համար:

5. Կատարողը եռամսյակային կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն կատարված դիմումների վերաբերյալ՝ նշելով համապատասխանությունը սպասարկման մակարդակի համաձայնագրին (SLA): Հաշվետվության ամբողջական ձևաչափը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ Պայմանագիրը ստորագրելուց հետո:

6. Սեփական պահեստի պահեստամասերով Պատվիրատուի սարքավորումների աշխատունակությունը վերականգնելու դեպքում կատարողը պարտավոր է տրամադրել սարքավորում արտադրողի կողմից հավաստագրված փոխարինող մասեր, որոնց ֆունկցիոնալ բնութագրերը փոխարինված պահեստամասերի բնութագրերին համապատասխան են կամ ավելի բարձր են:

7. Կատարողը ծառայությունների մատուցման ժամկետի ավարտից 15 օր առաջ պատվիրատուին է ներկայացնում սպասարկվող համակարգերի մասին հաշվետվություն:

8. Կատարողը փոխարինված մասի համար տրամադրում է առնվազն 12 ամսվա երաշխիք՝ դրա տեղադրման օրվանից:

9. Կատարողը ապահովում է Պատվիրատուի փոխգործակցությունը սարքավորումների և ծրագրային ապահովման արտադրողների հետ:

10. Որպես սարքավորումների և ծրագրային ապահովման վերաբերյալ արտադրողի հետ կնքված սպասարկման պայմանագրերի իրավատեր՝ Կատարողը նշում է Պատվիրատուին:

11. Պայմանագրի ավարտի կամ խզման դեպքում Կատարողը պարտավոր է, առանց հավելավճար գանձելու, Պատվիրատուին փոխանցել արտադրողի հետ կնքված սպասարկման պայմանագրերի իրավունքները՝ կապված սարքավորումների և ծրագրային ապահովման հետ:

Դիմումների մշակման գործընթացում կատարողը պետք է առաջնորդվի պատվիրատուի դիմումների առաջնահերթություններից ըստ SLA աղյուսակի (հավելված 2): Վնասված համակարգերի ֆունկցիոնալության վրա անսարքության ազդեցությամբ պայմանավորված պատվիրատուն կարող է փոխել առաջնահերթությունը ՝ ինչպես վերև, այնպես էլ վար:

Կատարողը պարտավոր է տրամադրել վթարային-վերականգնողական աշխատանքների կամ պլանային-կանխարգելիչ միջոցառումների պլան: Այն պետք է ներառի յուրաքանչյուր կետի կատարման ժամկետը, ինչպես նաև հնարավոր ռիսկերի գնահատումը: Պլանի կետերը, ինչպես նաև դրանց կատարման ժամկետներն ու ամսաթվերը պետք է համաձայնեցվեն Պատվիրատու հետ:

Առաջարկվող գործողությունների ծրագիրը պետք է ունենա սահմանափակ տևողություն և չգերազանցի SLA թույլատրելի ժամկետները՝ համաձայն դիմումի առաջնահերթության:

Դիմումի կարգավիճակների և առաջնահերթությունների բոլոր փոփոխությունները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի պատասխանատու անձի հետ և ուղեկցվեն Պատվիրատուի կոնտակտային անձի էլեկտրոնային փոստին ծանուցմամբ:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մատակարարը պետք է լինի Հավելված 1-ով սահմանված և որպես աջակցության «Արտադրող» (Vendor) տեսակ նշված Սարքավորումների և ծրագրային ապահովման արտադրողների լիազորված գործընկերը՝ տրամադրելով արտադրողի թույլտվության նամակ՝ համաձայնագրի կնքման պահից 10 օրացույցային օրվա ընթացքում:

Հավելված 1

Vendor	Model	Qty	Address	Vendor Support	Vendor Service Level	Integrator Support
Nutanix	NX-6200C	1	Yerevan	yes	Production	yes
Nutanix	NX-6100C	1	Yerevan	yes	Production	yes
Juniper	QFX5110-48S-AFI-CL1PFL	4	Yerevan, Dilijan	yes	CorePlus	yes
Juniper	VSRX-4G-STD	4	Yerevan, Dilijan	yes	Core	yes
PaloAlto	PAN-VM-300-PERP-BND1-PREM	16	Yerevan, Dilijan	yes	Premium Support	yes

PaloAlto	PAN-VM-100-PERP-BND2-PREM	2	Yerevan	yes	Premium Support	yes
PaloAlto	Panorama PAN-PRA-25	2	Yerevan, Dilijan	yes	Premium Support	yes
CyberArk	CYBR-PAS-20	1	Yerevan	yes	EMEA Maintenance	yes
IBM	IBM Qradar	1	Yerevan	yes	Support	yes

Հավելված 2

Դիմումի առաջնահերթություն	Նկարագրություն	Դիմումի մշակման, արձանագրման և խնդիրների կարգավորման ժամանակը ծառայություն մատուցողի կողմից
A	Խնդրի ամենաբարձր առաջնահերթությունը՝ կապված սարքավորման և ծրագրային ապահովման խափանման հետ: Խնդրին վերագրվում է այս կատեգորիան, եթե ծագած անսարքությունը համապատասխան սարքավորման և ծրագրային ապահովման ամբողջական խափանման պատճառ է դարձել: Աշխատունակությունը հնարավոր չէ մասամբ վերականգնել Պատվիրատուի պատասխանատու մասնագետների կողմից: Բնութագրվում է որպես կրիտիկական ազդեցություն Պատվիրատուի բիզնես գործընթացների վրա:	Մինչև 2 ժ.
B	Խնդրի բարձր առաջնահերթություն՝ կապված սարքավորման և ծրագրային ապահովման անսարքության հետ: Խնդրին վերագրվում է այս կատեգորիան, եթե ի հայտ եկած անսարքությունն առաջացրել է համապատասխան սարքավորման և ծրագրային ապահովման աշխատանքի խափանում, որն էլ հանգեցրել է գործող ծառայությունների որակի զգալի վատթարացման: Բացի դրանից՝ աշխատունակությունը հնարավոր չէ մասամբ վերականգնել Պատվիրատուի պատասխանատու մասնագետների ուժերով: Բնութագրվում է որպես կրիտիկական ազդեցություն Պատվիրատուի բիզնեսի գործընթացների վրա:	Մինչև 6ժ
C	Խնդրի նորմալ առաջնահերթություն՝ կապված սարքավորման և ծրագրային ապահովման անսարքության կամ դրա շահագործման որևէ բարդության հետ: Կատեգորիան վերագրվում է խնդրին, եթե սարքավորման խափանումն առաջացրել է ֆունկցիոնալության զգալի խափանում, որը հանգեցնում է աշխատունակության վատթարացման՝ պահպանելով ֆունկցիոնալության մեծ մասը: Բացի դրանից՝ այս կատեգորիան վերագրվում է, երբ համապատասխան սարքավորումները և ծրագրակազմը շահագործող մասնագետը շահագործման հետ կապված դժվարություններ ունի, ինչը կարող է հանգեցնել B կատեգորիայի կամ ավելի արտակարգ իրավիճակի:	Մինչև 24 ժ.
D	Խնդրի ցածր առաջնահերթություն՝ կապված սարքավորման և ծրագրային ապահովման	Մինչև 72 ժ.

	անսարքության կամ շահագործման որևէ բարդության հետ: Խնդիրին վերագրվում է այս կատեգորիան, եթե սարքավորման խափանումը չի հանգեցնում համակարգերի աշխատանքի խափանման:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղար՝

_____ Կ. Սարգսյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ստեպ Լոջիկ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Արգիշտի 7
«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1510017270080077
ՀՎՀՀ՝ 02840667
Տնօրեն՝

_____ Դ. Դավթյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 2
« 12 » հունվարի 2023 թ. կնքված
ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« 12 » հունվարի 2023 թ. կնքված
ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն